ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, Երևան 0010, Վարդանանց 13ա
Հեռ.՝ (374 10) 540 326, ֆաքս՝ (374 10) 540 613
Էլ.փոստ՝ scws@scws.am

13a, Vardanants st., Yerevan 0010, Armenia
Tel.: (374 10) 540 326, fax: (374 10) 540 613
E -mail: scws@scws.am

<<08>> Դեկտեմբեր 2019թ. N 03/5051-19

Ձեր _____ 2019թ. N _____

<<Վարդանյան-շին>> ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարդանյան

Ջրային կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) և <<Վարդանյան-շին>> ՍՊԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) միջև 29.08.2019թ.-ին կնքված կապալային աշխատանքների կատարման ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերության կողմից պետք է իրականացվեր Ղազանչի ջրաղբյուրների սանիտարական գոտում նոր, հեղուկ քլորով շահագործվող քլորակայանի կառուցման և Սառնակունք գյուղի մոտ Մուխութուրյանի ջրատարի ջրաքանակի համար քլորակայանի կառուցման աշխատանքները, սակայն 2019 թվականի հոկտեմբերի 18-ի դրությամբ աշխատանքները սկսված չեն, որի մասին Կոմիտեին գրավոր տեղեկացրել են աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող <<Ալտերնատիվ>> ՍՊԸ-ն և հեղինակային հսկողություն իրականացնող <<Ջինջ>> ՍՊԸ-ն: Նշվածի վերաբերյալ Կոմիտեն տղեկացրել է Ընկերությանը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի պահանջները՝ Կոմիտեն 2019 թվականի հոկտեմբերի 29-ին միակողմանի լուծում է ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով պետական գնման պայմանագիրը: Միաժամանակ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ <<Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից>>:

Տեղեկացնում եմ, որ <<Վարդանյան-շին>> ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության

կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2,810.0 հազ. ՀՀ դրամը որպես տույժ և 653.5 հազ. ՀՀ դրամ տուգանք Պայմանգրի 6.2 և 6.3 կետերի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 13,070.0 հազ. ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (Պայմանգրի ընդհանուր գումարի 10%-ը):

11/8/2019

X

ՍԱՄՍՈՆ ՉԱՏԻԿՅԱՆ

Հարգանքով՝

ՍԱՄՍՈՆ ՉԱՏԻԿՅԱՆ